ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«13» հուլիսի 2020թ. № 191

## «ԻՄ ԹԵՐԹԸ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԻՄ ԹԵՐԹԸ» ՍՊԸ-ի 2020 թվականի հուլիսի 13-ի հայտը՝ *որոշում եմ.*

1. «ԻՄ ԹԵՐԹԸ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06805005) տալ «ք. Սպիտակ, Երևանյան խճուղի 72/1» հասցեում գտնվող սեղմված բնական գազի լցավորման կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 13
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2020թ. № 192

## ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հուլիսի 1-ի ՆՔՏՄ/19.4/7478-20 գրության հիման վրա Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Արման Ավետիսյանի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Աբգարյանի կողմից 2020 թվականի հուլիսի 6-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն Սպիտակ համայնքի բնակիչ Սիմոն Հովհաննեսի Շիրոյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող, «ք. Սպիտակ, Պանրագործների թաղ., թիվ 244» հասցեում գտնվող հողամասում շինություն ինքնակամ կառուցելու մասին:

Սիմոն Հովհաննեսի Շիրոյանը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշել է, որ կատարել է իրեն վերագրվող վարչական իրավախախտումը:

2020 թվականի հուլիսի 6-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հուլիսի 1-ի ՆՔՏՄ/19.4/7478-20 գրությամբ, հիմնավորվեց, որ Սպիտակ համայնքի բնակիչ Սիմոն Հովհաննեսի Շիրոյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող, «ք. Սպիտակ, Պանրագործների թաղ., թիվ 244» հասցեում գտնվող հողամասում շինություն է ինքնակամ կառուցել:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին:

3. Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիմոն Հովհաննեսի Շիրոյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 15
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2020թ. № 193

## ՌՈՒԲԻԿ ԳԱԳԻԿԻ ԲՈՅԱԽՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հունիսի 26-ի ՆՔՏՄ/19.4/7053-20 գրության հիման վրա Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Արման Ավետիսյանի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Աբգարյանի կողմից 2020 թվականի հուլիսի 1-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն Սպիտակ համայնքի բնակիչ Ռուբիկ Գագիկի Բոյախչյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող «ք. Սպիտակ, Տեր Սիմոնյան փող., թիվ 39» հասցեում գտնվող հողամասում շինություն ինքնակամ կառուցելու մասին:

Ռուբիկ Գագիկի Բոյախչյանը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշել է, որ կատարել է իրավախախտումը:

2020 թվականի հուլիսի 1-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի հունիսի 26-ի ՆՔՏՄ/19.4/7053-20 գրությամբ, հիմնավորվեց, որ Սպիտակ համայնքի բնակիչ Ռուբիկ Գագիկի Բոյախչյանը իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ «ք. Սպիտակ, Տեր Սիմոնյան փող., թիվ 39» հասցեում գտնվող հողամասում շինություն է ինքնակամ կառուցել:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ռուբիկ Գագիկի Բոյախչյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Ռուբիկ Գագիկի Բոյախչյանին:

3. Ռուբիկ Գագիկի Բոյախչյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուբիկ Գագիկի Բոյախչյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը վարչական կարգով կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 15
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2020թ. № 194

## ՎԻԿՏՈՐ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2097840 վկայականը և Վիկտոր Գարսևանի Թորոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վիկտոր Գարսևանի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06006 282-52 կադաստրային ծածկագրով 0,075 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոց, թիվ 11/1» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 15
ք.Սպիտակ